ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
04 մարտի 2024 թվական գ. Պեմզաշեն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՔԱՐ-ՀԱՆՔ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների 2-րդ փուլի

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 12:00-ին, Պեմզաշեն գյուղի վարչական շենքում:

Ներկա էին՝ Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մակեյանը, Արթիկ համայնքի ղեկավարի օգնականներ Սևակ Պետոյանը, Տաթևիկ Չարչյանը, Պեմզաշեն բնակավայրի վարչական ղեկավար Աղասի Վարդանյանը, <<ՔԱՐ-ՀԱՆՔ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Հակոբյանը, ՇՄ նախարարության ՇՄԱԳՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետներ Նելլի Նասիբյանը, Սվետլանա Կիզիրյանը, Պեմզաշեն գյուղի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ, Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մակեյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման նպատակը. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն 2024թ. մարտի 4-ին ժամը՝ 12:00-ին, Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն բնակավայրի վարչական շենքում տեղի է ունենում «ՔԱՐ-ՀԱՆՔ» ՍՊԸ-ի կողմից Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի հարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների 2-րդ փուլը: Առաջին փուլը տեղի է ունեցել 2023 թվականի հուլիսի 6-ին, որտեղ համայնքը տվել է ընկերությանն իր նախնական համաձայնությունը:

Օրենքով սահմանված կարգով Արթիկի համայնքապետարանն իրազեկել է հանրությանը հանրային քննարկման մասին: Պեմզաշեն բնակավայրի բնակիչները ընկերության փորձագետին և բնապահպանության փորձագետներին կարող են հնչեցնել իրենց հուզող հարցերը, դիտողություններն ու առաջարկությունները ընկերության մտադրությունների վերաբերյալ:

Նա խնդրեց հանրային քննարկման մասնակիցներին բարձրացնել իրենց հուզող բոլոր հարցերը:

Ելույթ ունեցան

1. ՇՄ նախարարության ՇՄԱԳՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետ Ն. Նասիբյանը, ով ներկայացրեց, որ <<ՔԱՐ-ՀԱՆՔ>> ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունը <<Ա>> կատեգորիայի գործունեություն է և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության: Այդ գործընթացը կարգավորվում է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի համաձայն: Գործունեությունն ընթանալու է երկու փուլով՝ հիմնական և նախնական: Փորձաքննության ընթացում հայտը ուղարկվել է մի շարք նախարարությունների, գերատեսչությունների և վարչությունների, որոնց կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է և ձեռնարկողի կողմից ևս մեկ անգամ ուղարկվել է փորձաքննական կենտրոն: Մինչ հանրային քննարկումները, կատարվել են պատշաճ ծանուցումներ: Հանրային քննարկման ծանուցումից հաշված՝ 12 աշխատանքային օրվա ընթացքում դիտողություններն ու առաջարկությունները կարելի է ներկայացնել ՇՄԱԳ փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ:
2. <<ՔԱՐ-ՀԱՆՔ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը ներկայացրեց ընկերության ստեղծման պատմությունը, որ այն նորաստեղծ ընկերություն է, սակայն ընկերության հիմնադիրները նախկինում զբաղվել են տվյալ տարածքի ընդերքօգտագործմամբ, ունեցել են թույլտվություն և այժմ ցանկություն ունեն նոր հիմունքներով ստանալ թույլտվություն: Այդ տարածքն Արթիկի տուֆերի հանքատարածքում է գտնվում, որոշակի հատվածը շահագործված է եղել, զուրկ է բուսաշերտից, թափոնների որոշակի տեղադրում կա, ընկերությունն իր միջոցներով ուզում է այդ տարածքը թարմացնել՝ ստանալով նոր շինթույլտվություն: Բնապահպանական բոլոր նորմերը՝ սանիտարական գոտի, ջրցան մեքենաների կիրառում, պահպանված ե:, Տարածքում ծառեր չկան, ջուրը վերցվելու է Պեմզաշենից և իրականացնելու են ջրցանում, որն ամենանպատակահարմար միջոցառումն է փոշու տարածումը կանխելու համար: Միակ խնդիրը միջհամայնքային ճանապարհին է վերաբերում, մոտ 15-30 մետր, որը բաժանում է հանքատարածքը երկու տեղամասի: Եթե հեռավորությունների հետ կապված կան որոշակի սահմանափակումներ, ապա ընկերությունն այդ հատվածներից կարող է հրաժարվել: Հանքատարածությունը գտնվում է Պեմզաշեն բնակավայրի սահմանային գոտում, հարակից է Տուֆաշեն բնակավայրին, իսկ նշված ճանապարհահատվածը ներհամայնքային ճանապարհի մաս է կազմում, այն դաշտամիջյան չէ: Համայնքը կօգտվի ընկերության գործունեությունից, կստեղծվեն նոր աշխատատեղեր, սոցիալական ծրագրերին իրենք կունենան մասնակցություն, հողերի նպատակային նշանակությունները փոխելիս համայնքի բյուջեի մուտքերը և այլ դրական տեղաշարժեր կնկատվեն:
3. Բնապահպանության փորձագետը հարցրեց, որքան են բացհանքերի միջև հեռավորությունները:

   Ամենամոտը՝ 30 մետր: Հանքի տարածքը բուսաշերտից զուրկ է, ժամանակին շահագործված է եղել, այժմ ընկերությունը բավականաչափ ներդրում պիտի

կատարի, որ այդ տարածքներից կարողանա շահույթ ստանա: Ժամանակին լինելով շահագործված տարածք՝ որոշակի քանակությամբ պաշար արդեն իսկ արդյունահանված է: Կադաստրային առաջնային փուլում քննարկումների ժամանակ տեղում չափագրական աշխատանքներ են եղել, կադաստրային մի քանի տարածք էր դիտարկվում որպես համայնքային սեփականություն: Այդ աշխատանքների արդյունքում ընտրվեցին այդ երկու տարածքները:

4. Բնապահպանության փորձագետը հարցրեց, կան արդյոք կարմիրգրքյան տեսակներ, արոտ, խոտհարք, ծառ և բուսականություն:

Գ. Հակոբյանն ասաց, որ տարածքում ոչ մի էնդեմիկ բուսականություն չկա: Նա կոնկրետ քարտեզների վրա բացատրեց հանքավայրի տեղակայությունը:

5. Նիստը վարող Վ. Մակեյանը հարցրեց, հնարավոր է արդյոք երկու տեղամասերը միացնել իրար:

Գ. Հակոբյանը պատասխանեց՝ ոչ: Քանի որ ՏԿԷ նախարարության նմանօրինակ դեպքերում նախապատվությունը տալիս է 2 տարբեր նախագծեր ներկայացնելուն:

Գ. Հակոբյանն ասաց, որ կտրվածքի տեսակից ելնելով, որը ժողովրդական լեզվով <<глубокол>>-է կոչվում, փոշի է առաջացնում, դրա հետ կապված՝ հնարավոր չէ երկու հատվածները միավորել, այստեղ կառաջանա մի շարք խնդիրներ, այդ պատճառով տարածքը բաժանված է երկու տեղամասերի, սակայն եթե հնչեն այլ առաջարկներ, ընկերությունն աշխատելու է այդ ուղղությամբ:

Հարցեր հնչեցին

1. Նիստը վարող Վ. Մակեյանը հարցրեց, ինչ եղանակով է լինելու կտրվածքը:

Գ. Հակոբյանը պատասխանեց, որ երկու եղանակով էլ՝ ուղղաձիգ և հորիզոնական: Արթիկի տուֆը ունի իր յուրահատկություններն ու առանձնահատկությունները: Իր որոկական հատկանիշներով Հայաստանում Արթիկի քարն իր նմանօրինակը չունի, Կաքավաձորի և Բազմաբերդի տուֆը փոքր-ինչ մոտ է իր որոկական բնութագրով Արթիկի տուֆին: Արթիկի հանքավայրը նախատեսում է ուղիղ կտրվածքի և <<глубокол>>-ի եղանակով: Երկու ձևի կտրվածքի հնարավորությունն էլ կա, 4-5 մետրից պաշարը խտանում է, և արդեն այդ տեսակը ենթակա է երեսպատման:

2. Վ. Մակեյանը հարցրեց, որքան պաշար կա հանքավայրում:

Գ. Հակոբյանը պատասխանեց՝ պաշարների զգալի մասն արդյունահանված է, մնացածն արդեն տնտեսվարողի ռիսկներն են, նրա որոշումն է:

3. Գյուղի բնակիչներից հարցրեցին, թե քանի աշխատատեղ կստեղծվի հանքավայրի գործունեությունից:

Գ. Հակոբյանը ասաց, քանի որ նախատեսվում է երկու տեղամասի շահագործում, ապա կունենան մոտ 10 աշխատատեղ:

4. Բնապահպանության փորձագետը հարցրեց, որ Կադաստրի Կոմիտեից ունեն կարծիք, որ տվյալ հողամասը նաև համընկնում են քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողերի հետ:

Գ. Հակոբյանը ասաց, որ եթե նախարարությունը տեխնիկական առաջադրանք տա, ընկերությունը կանի նոր հարցումներ և ճշտումներ: Դա կդիտարկվի ընկերության կողմից և կլրամշակվի ընկերության կողմից, որպեսզի խոչընդոտներ չլինեն:

Նիստը վարողը խնդրեց մասնակիցներից լինել ակտիվ և հարցեր հնչեցնել ընկերության ներկայացուցիչներին:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, նիստը վարողը փակեց նիստը, ցանկացավ ընկերությանը հաջողություններ, և բոլոր դիտողություններն ու առաջարկությունները հիմք ընդունելով՝ շարունակել հանրային լսումների հետագա փուլերը:

Հանրային քննարկումն ավարտվեց 12:15-ին:

Հանրային քննարկումը վարեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝ _____ Ա. Մակեյան

Արձանագրեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի օգնական՝ _____ Տ. Զարգյան

<<ՔԱՐ-ՀԱՆՔ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ _____ Գ. Հակոբյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումների մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

«ՔԱՐ-ՀԱՆՔ» ՍՊԸ-ի կոմից Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի հարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների 2-րդ փուլի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

04.03.2024 թ. ժամը 12:00-ին **Արթիկի համայնքապետարան**

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	093 028090	[illegible]	[illegible]
2	[illegible]	077852091	[illegible]	[illegible]
3	[illegible]	093353638	[illegible]	[illegible]
4	[illegible]	094-52-10-03	[illegible]	[illegible]
5	[illegible]	093 25-32-46	[illegible]	[illegible]
6	[illegible]	094 717473	[illegible]	[illegible]
7	[illegible]	094743136	[illegible]	[illegible]
8	[illegible]	077-56-70-68	[illegible]	[illegible]
9	[illegible]	–	[illegible]	[illegible]
10	[illegible]	–	[illegible]	[illegible]
11	[illegible]	093 014046	[illegible]	[illegible]
12	[illegible]	091-61-12-41	[illegible]	[illegible]
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				